


2780

ԱՐ ԽՈՐԴԻԱՅԻՆ
ԱՐԿՏԻԿԱՅԻ ՀԱՄԱՐ



Գ Ե Տ Հ Պ Ա Տ

ՊԱՅՔԱՐԸ ԽՈՐՃՐԴԱՑԻՆ

ԱՐԿՏԻԿԱՑԻ ՀԱՄԱՐ

„ԶԵԼՅՈՒՍԿԻՆ”-Ի ՀԵՐՈՍԱԿԱՆ ԱՐԴԱՎԸ

A I 8448



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1 9 8 5

Պատ. խմբագիր՝ Հ. Հովհաննեսիս
Ֆեխ. խմբագիր՝ Կ. Քենյան
Թարգմանիչ՝ Ա. Վ. Առաքելյան
Մրագրիչ՝ Ա. Պալտօնյան

Գլուխ. 197. պատվեր 303. Էլ. 3282 տիրած 3000
Հանձնված և արտադրության 18 մարտի 1935 թ.
Ստորագրված և ապադրելու 15 հունիսի 1935 թ.
Գլուխը Տպարան—Եկեղեց. 11 Դաշնի ՀՀ ճ

ԻՆՉՈՒ ՅԵ ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒ-
ՆԸ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԱՐԿՏԻԿԱՅԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ
ՀԱՄԱՐ

Խորհրդային կառավարությունը
Հատառակ ուշաղ բռնթյունն և դարձնում
Հյուսիսային ծովային ճանապարհի
յուրացման վրա: Արկտիկայի յու-
րացման գործում ունեցած հսկայա-
կան նվաճումներն ապահովված են
սոցիալիստական խորհրդային կարգե-
բով, վորոնք չտեսնված ասպարեզ են
տալիս գիտության և մեր յերկրի
արտադրողական ուժերի զարգաց-
ման համար:

Ինչու յենք մենք այդպիսի համառ
պայքար մղում Արկտիկայի նվաճման
համար:

Առաջին.— Մեր յերկրի ամենամեծ

ծովային սահմանը հենց Սառուցյալ
ծովի ափերին և գտնվում։ Դարեր
շաբունակ կարծում եյին, վոր դա
մեր դժբախտությունն ե, վոր Սո-
ռուցյալ ծովի ծով չե՛, այլ մի խցան,
վորը փակում ե մեր ճանապարհները։
Խորհրդային բեվեռային արշավա-
խմբերը ցույց տվեցին, վար արդ
այդպես չե։ Հյուսիսային ծովային
ճանապարհը մեր լայնածավալ յերկրի
արևմուտքն ու արևելքը կապում ե
իրար հետ մի ամենակարճ ծովային
ճանապարհով, վորն անցնում է խոր-
հրդային ծովերով, և վոչ թե ո-
տար յերկրներով՝ պատվելով վողջ
Ասիայի շուրջը՝ ինչպես ներկայիս
ճանապարհն և Սուեդի ջրանցքով։
Մառուցյալ ծովի յուրացումը հնա-
րավորություն կատ Միության ա-
ռիական մասի հյուսիսը կապել նրա
հիմնական արդյունաբերական կենտ-
րոնների հետ։

Հյուսիսային ծովային ճանապարհը
նշանակում է Միության ասիա-
կան մտական բոլոր հյուսիսային ռա-
յոնների—Յակուտիայի, Չուկոտյան-
Անազիրյան յերկրի և այլն—աշխու-
ժացումը: Մենք հնարավորություն
ենք լնձեռում արևմուտքից կատվել
լնայի, Յանայի, Ինդիպիրկայի,
Կոլիմայի հետ: Արխանգելսկից դեպի
Խաղաղ ովկինանոս— Ստորոցյալ ծո-
վով— անցնելիս մենք ունենում ենք
մի ճանապարհ, վորը յերկու և կես
անգամ կարճ և քանի թե ճանապարհն
արևմուտքից՝ Սուեդի ջրանցքով, ու
անհամեմատ եժան, և վոր դիմա-
վորն է, ոտար յերկրներից անկախ,
քանի վոր վողջ ճանապարհն անցնում
է խորհրդային ծովերով: Գնայած
վոր այս ծովերը ծածկված են սա-
ռուցներով, բայց վոչ մի յերկիր չի
կարող համեմտովել մեզ հետ՝ սառ-

ցահատային աշխատանքի փորձի տեսակետից :

Հյուսիսային ծովային ճանապարհն ապահովված ե իր սեփական ածուխով։ Ածուխ կա և՝ Լենայի գետաբերանում, և՝ Կոլիմա, Խատանգա ու Պյասինա գետերի շրջաններում։ Մենք կարող ենք ածուխի համար վայուտայի խոշոր վատնումներ չանել, վորից չեյինք կարող խռոսափել, յեթե Հեռավոր Արևելք ճանապարհովեյինք շրջանային ճանապարհով՝ Ցանհայի և այլն մոտերքով, ուր ամենուրեք ստիպված կլինեյինք ածուխ վերցնել։

Այս ճանապարհը մեծ հարստություն և մեր ժողովրդական տնտեսության համար։ Որ, Յենիսեյ, Լենա և Կոլիմա գետերի ավաղանների հսկայական հարստությունները յելք կտանան գեղի մեր արևմտյան նավահանգուտները— Արխանգելսկն ու

Դուրմանսկը — և, հետեւապես, դեպի
արևմտա-յելլրոպական շուկան, վոր-
տեղ Սիրիքի անտառանյութերի և ու-
րիշ աղբանքների շատ մեծ պահանջ
իա:

Հյուսիսային ծովային ճանապար-
հը նորմալ հաղորդակցական արտե-
րիա գարձնելու խնդիրը մեր աչքերի
առաջ անշեղորեն լուծվում է: Շին-
վում են ռադիոկայաններ, բևեռային
ողերեւութարանական կայաններ,
բեռնափոխման բաղաներ ու նավա-
հանգստաներ (իդարկա), սառցահատ-
ներ, բևեռային ավիացիա: Տարեց-
տարի աճում ե տաղբանքաշրջանառու-
թյունը: Որինակ, Կարայի ծովի ապ-
րանքաշրջանառությունը: Այստեղ
թիվերը խիստ աղղու յեն: Այսպես,
1914 թվին Կարայի ծովի ապրանքա-
շրջանառությունը հայտասար եր
5,614 տոննի, 1927-ին — 24,428 տ.,
1929-ին — 75,467 տ. և 1930-ին —
143,000 տ.:

Յերկրորդ .— Արկտիկայի յուրացումը մեզ հնարավորություն եւ տալիս Արկտիկայի արտադրողական ուժերը, ամենից առաջ նրա ոգտակար հանածոները, ոգտագործել սոցիալիստական շինարարության կարիքների համար :

Ծովային կենդանիների (փոկ, ծովագուլ, կետ), ձկան, ոգտակար հանածոների (քարածուխ, նավթ, մետաղներ) հսկայական հարստությունները, վորոնք գտնվում են Հյուսիսի դժվարամատչելի մասերում, պետք եւ մտցվեն Միության ընդհանուր ֆոնդի մեջ, վորը հսկայական տեմպերով բարձրացնում երնական արտադրողական ուժերի գարգացումը :

Արկտիկայի առանձին ռայոնների ուսումնասիրությանը զուգընթաց կատարվում եւ նաև նրանց տնտեսական յուրացումը : Մինչ հեղափոխու-

թյունն այս դործի վրա համարյա
վոչ մի ուշադրություն չեր դարձ-
վում։ Արկտիկայի հետ կապվում եր
միայն սոլիտար արջի ու սառցե ըն-
դարձակ տարածությունների մտա-
պատկերը։ Վերջին տասր տարիները
ցույց տվեցին, թե ինչպիսի՞ հսկա-
յական հարստություններ են թագնը-
պած Արկտիկայում—վորպես մեռած
կապիտալ։

Մեր ծայր արևմտյան բեկուային
մի քանի տարի առաջ գտնված ապա
սայոնում—կոլա թերակղզում—ինչ-
պես հայտնի յե, շահագործվում են
տիտի հսկայական պաշարները։ Նույն
տեղում գտնված են մի շարք ոգտա-
կար հանածոներ—զունավոր մետաղ-
ներ, յերկաթահանք, շինարարական
նյութեր։ Պեչորա գետի ավագանում,
բեկնուային շրջանից այն կողմ, սկըս-
վել ե վերջին ժամանակներում հայ-
տարերված բարձրորակ քարածխա-

Հանքերի շահագործումը։ Այդ տեղեւ-
րից դեպի հյուսիս գտնվող Վայզաչ և
Նոր Յերկիր կղզիներն արդեն հայտ-
նի յեն վորպես գունավոր մետաղնե-
րով ու ազրեստով հարուստ ուայն-
ներ։ Ֆրանց Յողեֆի յերկրում հայ-
տարերված է քարածուխ։ Զափազանց
հարուստ դուրս յեկալ Յենիսեյ գետի
ներքին հոսանքի աջ ափը, ուր շահա-
գործվում են ամենալավ տեսակի
զբաֆիտի հանքերը և հայտարեր-
ված են գունավոր մետաղներ։ Թայ-
միր թերակղզու արևմտյան մասում
հայտարերված է փայլար, իսկ ա-
րևելյան մասում՝ Խատանգա գետի
սայոնում— նավթ, քարածուխ և
ծծումը։ Լենա գետի ներքին հոսանքի
սայոնում գտնվում են քարածխի
պաշարներ և մի շարք գունավոր մե-
տաղներ։ Նույնը կա նույնպես և Կո-
լիմա գետի ավազանում և Չուկու-
յան թերակղզում։ Հյուսիսային ծո-

վասիկ բազմաթիվ վայրերում զտըն-
դում և թանկագին մամոնտի վոսկո-
րը, հատկապես Նոր Սիբիրյան կղզի-
ներում և Յանա ու Ինդիգիրկա գե-
տերի միջև։ Բացի այս կան տորֆով
և բարձրորակ շիհանյութերով հա-
րուստ բազմաթիվ վայրեր, վորոնք
հեռափոր հյուսիսում ոկաված որեցոր
յայնացող շինաբարության կապակ-
ցությամբ ներկայումս մեծ նշանա-
կություն ունեն։

Այս բոլորը դեռևս Արկտիկայի
վողջ հարստության վո'չ լրիվ թվար-
կումն ե, և յեթե նկատի ունենանք,
վոր այդ շրջանի (Արկտիկայի) մեծ
ժտար զեռես հանդամանորեն, ման-
րամանորեն ուսումնասիրված չե-
տակա հեշտ և պատկերացնել, թե ինչ-
պիսի՛ հնաբավորություններ են
ապաստմ մեզ այստեղ։

Յերբարդ. — Մեր հեռավոր հյուսի-
սի ժողովրդները, վորոնց առաջին

անդամ Հոկտեմբերյան հեղափոխությունը ավելից ազգային ինքնորոշում, դպրոց և մայրենի լեզվով դրքեր, հյուսիսային ծովային ճանապարհի բացման հետ մեկտեղ անտեսական և կուլտուրական զարդացման փայլուն հնարավորություններ պետք եւ ստանան :

Չորրորդ .—Մեզ անհրաժեշտ եւ անընդհատ հետեւել բեվեռային շրջանի մթնոլորտում կատարվող պրոցեսներին, քանի վոր այդ պրոցեսներն ամենասերտ կերպով կապված են բարեխառն լայնությունների յեղանակի հետ, և, առանց գիտենալու թե ի՞նչ է կատարվում բեվեռային մթնոլորտում, մենք ի վիճակի չենք լինի բավարար հաջողությամբ նախագուշակել յեղանակը՝ մեր յերկրի տերիուրիայի վրա։ Իսկ յեղանակի նախագուշակումը հսկայական նշանակություն ունի ժողովրդական տնտեսու-

թյան ամեն մի ճյուղի, հատկապես
դյուզատնտեսության, մեր կոլտըն-
տեսական դաշտերի համար:

Արկտիկայի յեղանակի ուսումնա-
սիրության համար մենք ունենք բե-
մակային ողերեսութարանական կա-
յանների բավական խիտ ցանց: Մինչ
հեղափոխությունը Ռուսաստանում
դոյլություն ունեցին բնդամենը 4 բե-
մակային կայաններ, իսկ ներկայումս
նրանց թիվը հասնում է 39-ի: Բեկե-
ռային կայանների թվի մեծացման
հետ մեկտեղ լայնացել է նաև նրանց
գիտական աշխատանքը: Դիկոսն
կղզու, Ֆրանց Յոզեֆի յերկրի և
Ռուսինի կայանները լայնացել են և
դառնել գեոֆիզիկական*) ոբսերվա-
տորիաներ: Բազմաթիվ կայաններ,
բայց եյության, դառնել են գիտահե-

*) Գեոֆիզիկա—գիտություն յերկրի ձեր
և ֆիզիկական կյանքի մասին:

Ա. Պ.

տազոտական բազաներ, վորտեղ կտ-
տարվում են յերկրագանական, տե-
ղադրական, կենսաբանական և տըլ
տշխատանքներ, վորոնք անհրաժեշտ
են կից ռայոնների բազմակողմանի
ուսումնասիրության և հետազտ յու-
րացման համար:

Այդ կայաններն ամեն որ տեղեկու-
թյուններ են տալիս Մոսկվա՝ Յեղա-
նակի Կենտրոնական Բյուրոյին՝ յե-
ղանակի մասին. այդ տեղեկություն-
ները հսկայական նշանակություն ու-
նեն վողջ Միության յեղանակի նա-
խագուշակման համար, քանի վոր մեր
յեղանակը հստեղծվում է հյուսի-
սում»: Հետեւելով սառուցյների
շարժմանը, ծովերի սառչելու և սառ-
ցից ազատվելու ժամանակին և
այն՝ — այդ կայանները հնարավո-
րություն են ստեղծում շոգենավերի
ավելի ապահով յերթեւեկության հա-
մար:

Ռազմիոցանցի, ծովային և ողային
կասի առկայությունը հյուսիսային
ծովափիի ամբողջ յերկարությամբ՝
տուալել ամբացնում եւ մեր հայրենի-
քի տնտեսական հզորությունն ու
ոդաշտապահունակությունը:

II

ԻՆՉՊԵ՞Ս Ե ՀԱՅՏԱԲԵՐՎԵԼ ՀՅՈՒՍԻՍԱ- ՅԻՆ ԾՈՎԱՅԻՆ ՑԱՆԿԱՄԱՐՁԸ

Ամբողջ աշխարհը դիմե «ԶԵԼՅՈՎԱ-
ԼԻ»-ի և նրան նախորդող խորհրդա-
յին սառցահատների հերոսական բն-
գիուային արշավների մասին:

1932 թվին ընկ. Ռ. Յու. Շմիդտի
ու լսամբորությամբ խորհրդային ար-
շավախումբը «Սիրիքյակով» սառ-
ցահատով, վորի նախապետն ընկ.
վարոնինն եր, իրականացրեց վերջին
դարերի բենուահետախռովների վա-

զեմի իղձը՝ մի նավիդացիայի*) ընթացքում անցնելով Արխանդելսկի Կլադիվաստոկ:

Չորս դար առաջ, գեուես XVI դարի սկզբներին, սկսվել ելին Բելկոսային ծովով դեպի Արևելքի հարուստ, բուրժուական բազմաթիվ հետախույզներին հրապուրող յերկրները—Սիրիր, Զինաստան, Հնդկաստան—տանող ճանապարհի հայտարերման վորձերը:

Հյուսիսային ծովային ճանապարհի վորոնումներին առաջին անգամ ձեռնամուխ յեղան անդլիացիները: Այն ժամանակակից յերկու անդլիացի ծովագնացների—Արտուր Պետին և Զարլդ Զեկմանին (1580թ.)—առա-

*) Նավիկացիա կամ նավիկացիոն սկզբան կոչվում է այն ժամանակամիջոցը, վորոնթացքում տվյալ ծովը աղատ է (սուսու լուներից կամ այլ խոչընդուներից) նովոգնացության համար:

Ա., Վ.

ջին տնկամ ուսւս սլամորներից հետո
Հաջողվեց մտնել Արայի ծովը : Բայց
այդ ծովի արևադաշտ ափերից այն
կողմ՝ զեղի արհելք, անցնել նրանք
չկարողացան :

Անդիբայից հետո Հյուսիսային ծո-
վային ճանապարհով սկսեց հետա-
քրքրովիել Հոլանդիան : Հոլանդացինե-
րի արկածիկական ճանապարհորդու-
թյուններից առանձին ուշադրության
արժանի յեն Նեյի և Բարենցի ճանա-
պարհորդությունները . նրանք ան-
ցել ելին Յուգորյան Շար նեղուցը*)
և յեղել ելին Կարայի ծովում :

Ամբողջ XVII դարի ընթացքում
Յեյբոստայի և Ասիայի Հյուսիսային
տիեզրով անցնաղ ծովային ճանա-
պարհի վորոնումները չեն դադա-
րսում :

Բայց հեռավոր Հյուսիսի դաժան

*) Վայրած կզգու և մայր ցամաքի մեջ
դանակող նեղուցը : Ա. Վ.

բնությունը, Արկտիկայում ծառացող խող խոչընդուների գեմ պայքարելու անբավարար փորձը և թույլ տեխնիկական միջոցները մի շարք պարտությունների յեն մատնում այն ժամանակվա ամենախիզախ ծովագնացներին: Ավելի հեղինակավոր ծովագնացները դալիս են այն յեղբակացության, վոր Հյուսիսային ծովային ճանապարհը վո՛չ միայն տնտեսք և դործնական նպատակների համար, այլև բացարձակապես անանցանելի յէ: Հյուսիսային ծովային ճանապարհը գտնելու հետազա փորձերը դադարեցին, և միայն 200-ամյա ընդմիջումից հետո կազմակերպվեց նոր արևմտայելվրոպական արշավախումբ:

Խուս պամոքները, Սպիտակ, Բարենցի և Կարայի ծովերում յելքրոպացինների յերեալուց դեռ շատ առաջ,

մոչ միայն դիտեցին Շատիցը երգեննն ու
նոր Յերկիրը, այլ նաև ողտիվում ե-
ցին դեպի Որի գետաբերանը տանող
ծովային ճանապարհով:

Սիրիրի միացումը Մոսկովյան
պետությանը դեռևս XVII դարի ա-
ռաջին կեսում առիթ տվեց կազակնե-
րի (Յելիսեյ Բուզա, Իվան Պոստնի-
կով, Միխայիլ Ստադուխին) Սիրիրի
հյուսիսային ծովափի, այսինքն՝
ապագա Հյուսիսային ծովային ճա-
նապարհի, վրա արած մի շաբք հայ-
տադործումներին: Այդ ժամանակի
ամենանշանակությունը ճանապարհորդու-
թյունը Սեմյոն Դեմյովինն է (1648
թ.): Նա անցել եր Բերինգյան նեղու-
ցով և գտել Անագիր գետի գետաբե-
րանը: Սակայն կազակների հայ-
տադործումները համարյա անհայտ
էին միացել:

1728 թվին Բերինգը հայտաբե-
րում է ներկայումս իր անունը կըոդ

նեղուցը։ 1733 թվին սկսում է աշխատել «Հյուսիսային Մեծ Արշավախումբ»-ը։ Արշավախոմբի կողմից քարտեզագրվեց Ասիայի հյուսիսային վողջ ծովափիը։ Այս աշխատանքի վերջանալու (1744 թ.) հետ մեկտեղ տեսականորեն լուծվել եր Հյուսիս-Արևելյան միջանցքի^{*}) խնդիրը, բայց փորձը բերում եր այն յեզրակացությանը, թե դեռևս պահանջվում է լուծել Հյուսիսային Սասուցյալ ծովի մի ամբողջ շարք բարդ հիդրոգրաֆիականն^{**}) պրոբլեմները, վորապես հնարավոր դառնա զործնականորեն իրացնել Յեվրոպայի և Ասիայի հյուսիսային ափերով անցնելու խնդիրը։

*) Յեվրոպայից Հեռավոր արևելք՝ Յեվրոպայի ու Ասիայի հյուսիսային ափերով անցնող ճանապարհ։

Ա. Վ.

**) Հիդրոգրաֆիա—ջրագրություն՝ յերկրի մակերեսի ջրերի ուսումնասիրությամբ ու նկարագրությամբ զբաղվող դիտություն։

XVIII դարի 60-ական թվականները նշանակալից են Սավակա Լոժկինի և Յակով Զիրակինի ճանապարհորդություններով։ XIX դարի ստաջին կեսը նշանակալից ե Լիտկեյի, Պախատումովի և Յիլոլկայի Նոր Յերկրի ուսումնասիրության շուրջը կատարած փայլուն աշխատանքներով։ 70-ական թվականների սկզբին դեպի Կարսյի ծովը ճանապարհորդություն է կատարում Կրուպենշտերնը։ 1875 թվին շվեդացի բնվեռախույզը Ալբլ'ֆ Նորդենշելդը հասավ մինչև Յենիսեյի գետաբերանը, իսկ այդտեղից, մակույկով, հասավ Յենիսեյսկ քաղաքը։ Իր այս ճանապարհորդությունը նա կրկնեց 1876 թվին։ Այսպիսով Հյուսիսային ծովային ճանապարհի արևմտյան հատվածը ուրդեն կարելի յեր հաշվել վորոշված։

Սակայն կապիտալիստական յերկրները, և նրանց թվում ցարական

Հին մոռաստանը, չկարդացան ի-
րացնել Հյուսիսի, թեկուղ և նրա ու-
սումնասիրված արևմտյան մասի
կցումը համաշխարհային տնտեսու-
թյանը: Միմիայն Հոկտեմբերյան հե-
ղափոխությունից հետո, իշխանու-
թյան գլուխ անցած պրոլետարիատի
միջոցով, իրացվեց ծովային հաղոր-
դակցությունը Յենիսեյի գետաբե-
րանի հետ: Ներկայումս Հյուսիսային
ծովային ճանապարհի արևմտյան
մասը կարելի յև վերջնականապես
յուրացված համարել: Առքհրդային
Միության ու արևմտայեվրոպական
նավահանգիստների և Յենիսեյի գե-
տաբերանի միջև ամեն տարի նավում
են տասնյակ նավեր: Դրանք այսպես
կոչվող «Կաբայի Արշավախմբեր»-ն
են, վորոնք տարեցտարի ընդունում
են ավելի ու ավելի մեծ ծավալ և ա-
վելի ու ավելի խոշոր նշանակություն

թե՛ Աիրիքի և թե՛ ամբողջ Մին-
թյան տնտեսություն համար:

Կապիտալիստական աշխարհում
հետազոտողների թանկարժեք հայ-
տագործումները հաճախ են մնացել
անողագործելի: Բայց վորոշ բեվե-
ռային ծովագնացներ չթողեցին
Հյուսիսային ծովային ճանապարհը
դանելու միտքը: Նորդենշելդը, վոր
վորոշել եր անցնել վողջ Հյուսիսա-
յին ծովային ճանապարհով, 1878
թվի հուլիսի 22-ին իր արշավախրմ-
րով «Վեդա» նավով դուրս յեկավ
կալսկրոն նավահանգստից (Շվե-
դիա): Բերինգի նեղուցին ընդամենը
222 կլմ. չհասած, Պիտեկայ ծան-
ծաղուտի մոտ «Վեդա»-ն շրջապատ-
վեց անանցանելի սառույցներով, վո-
րոնցից ազատվեց միայն 1879 թվի
Հուլիսի 18-ին և 20-ին մտավ Բե-
րինգյան նեղուցը: Այդպես կատար-
վեց առաջին անգամ լրիվ նավազնա-

յությունը Հյուսիսային Սառուցյալ
ծովով, վորը աևեց յերկու նավի-
դացիոն սեղոն։ Բայց և դրանից հետո
յել Հյուսիսային ծովային ճանա-
պարհը չստացավ վորեւ գործնական
նշանակություն։

Նորդենշելդից հետո («Սիրիբյակո-
վից» առաջ) այդ ճանապարհով անցնել
էն միայն 2 արշավախմբեր. Ռուսա-
կան Հիդրոգրաֆիական արշավա-
խմբերը 1914—15 թ.թ.՝ մեկ ձմե-
ռումով և Նորվեգիացի հայտնի բե-
վեռախույզ Ռ. Ա. Ամունդրենի ար-
շավախմբերը 1918—20 թ.թ. 2 ձմե-
ռումով։ Այս արշավախմբերը շատ
քիչ բան ավելացրին Նորդեն-
շելդի յեղքակացություններին, վո-
րոնց հիմնական միտքն այն և,
թե «Ատլանտյան ովկիանոսից Խո-
ղաղ ովկիանոս աանող ճանապարհով
հաճախ կարելի յե անցնել մի-
քանի շարաթվա ընթացքում՝ բե-

յեսային ծովերում լողալու համար
հատուկ սարքավորում եւ փորձա-
ռու անձնակազմ ունեցող նա-
յովք . բայց սակավ հավանական ե,
փոր, Սիրիոյան Սառուցյալ ծովի
մասին ունեցած ներկայիս տեղեկու-
թյուններով, այդ ճանապարհը գործ-
իտկան նպատակների համար կենսա-
կան նշանակություն ունենա» :

Կապիտալիստական յերկրների գիտ-
նականները դեռևս ելի՛ մի շարք
ճանապարհորդություններ կատարե-
ցին Արկտիկայում : Ամենքին հայտնի
յեն Նանսենի, Պիրիյի, Ամունդսենի
և այլոց անունները : Բայց նրանց բո-
լոր հետազոտությունները ցանուցիր
եյին, իրարից անջատ, միասնակա-
նությունից զուրկ : Յերբեմն նրանք
նպատակ եյին զնում ուեկորդների
հասնել, որինակ, Հյուսիսային Բե-
լվեսի հայտարերումը : Անսիստեմ
հետազոտական աշխատանքն Արկ-
տիկայում, կատարված հետազոտու-

թյունների արդյունքները և պրակտիկան միացնելու, ի մի բերելու հնարավորության բացակայությունը կապիտալիստական կարգերի շրջանակների մեջ՝ սնում ելին Հյուսիսային ծովային ճանապարհի անպետքության և մերձբեկվեռային շրջանների ոգտագործման անհնարինության մտսին յեղած հայացքը։ Այդ հայացքը իշխում եր մինչև պրոլետարիատի իշխանության դլուխ անցնելը։ Կոմունիստական կուսակցությունն ու Խորհրդային իշխանությունը բարեզովին այլ կերպ մոտեցան Արկտիկայի նվաճման դործին։

III

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՐԿՏԻԿԱԿԱՆ ԱՐԴԱՎԱԿԻՄԵՐԸ

Ինչպես սոցիալիստական շինարարության այլ ասպարեզներում, այնպես ել Արկտիկայի յուրացման աշ-

խատանքներում մացվեց Առըհրդային
իշխանության աշխատանքների հիմ-
նական սկզբունքը — պրանայնու-
թյունը՝ բոլշևիկյան թափին գու-
ղորդված։ Ինչի՞ց եր հարկա-
վոր սկսել աշխատանքը։ Ամենից ա-
ռաջ հարկավոր եր հետազոտել Հյու-
սիսային ծովային ճանապարհին կից
ըրջանները։ Առըհրդային հետազո-
տությունները հենց սկզբից գործնա-
կանորեն դրվեցին։ Յուրաքանչյուր
աշխատանք, վոր կատարվում եր
հյուսիսի վորեւե անծանոթ վայրում,
վերջանում եր մշտական գիտական
կայանի կառուցմամբ, ուր գիտական
աշխատանքը շարունակվում ե ամ-
բողջ տարին և գիտողությունների
արդյունքները անժիջապես ուսղիոյով
հաղորդվում են կենտրոն։ Այս աշ-
խատանքը խորհրդային իշխանու-
թյան կողմից սկսվել և գեռես Հյու-
սիսային Յովային Ճանապարհի Գրլ-

իսավոր վարչության (Главное Управление Северного - Морского Пути - ГУСМП) կազմակերպումից առաջ:

1922 թվին, յերբ դեռ վերջնականապես լիկվիդացիայի չեյին յենթարկված քաղաքացիական կուխվների բոլոր ճակատները, կառավարության կողմից կազմակերպվեց առաջին ծովային բեմեռային արշավախումբ «Պերսեյ» նավի վրա: Այդ արշավախումբը սկիզբ դրեց Բարենցի ծովի խորհրդային հետազոտություններին: Շուտով, սրանից հետո, մեր հայտնի հիդրոգրաֆներ Յեվգենովի և Մատիսսենի կողմից առաջին անգամ ճշգրտորեն քարտեզի վրա յե անցկացվում լենա գետի դելտան:

1923 թվին Մատուսեվիչի գլխավորած արշավախումբը հիմնադրեց խորհրդային առաջին բեմեռային

արսերվատուրիան Խատոռչկինի Շաբ*)
նեղուցի վրա :


1924 թվին պրոֆ. Սամոյլովի ըլ
մուտքային բարկասով անցավ Նոր
Յերկրի արևելյան ափեքով :

1926 թվին Վ. Բանգելի յերկիրն ու-
ղարկվեց վերաբնակիչների (կալո-
նիստների) առաջին խումբը Գ. Ա.
Ռոշակովի գլխավորությամբ, վորը
Յ տարվա ընթացքում հավաքեց թան-
կաթժեք գիտական նյութեր և հիմք
դրեց կղզու մշտական բնակչությանը :

1929 թվին Ռ. Յու. Շմիդտին հանձ
նարարկվեց «Սեղով» նախով Ֆրանց
Յողեֆի յերկիրը տանել նրա առաջին
բնակիչներին, հիմնել այնտեղ գեո-
ֆիզիկական կայան, և բարձրացնել
կղզու վրա խորհրդային դրոշակիր**) :

*) Նոր Յերկրի յերկու կղզիները իրարից
բաժանող նեղուցը Ա. Վ.

**) Նախքան այդ նորվեգիացիները վորոշ
աենդենց եյին ցուցաբերում՝ Ֆրանց Յո-
ղեֆի յերկիրը գրավելու նկատմամբ:



«Չեյտակին»-ի եքսպեդիցիայի պետ ընկեր
Ռ. Յան Շ Մ Ի Դ Տ

1930 թվին Ա. Յու. Շմիդտը նույն
«ի եղավ» սառցահատով և Վարոնինի
հայլապետությամբ ընաց Հյուսիսա-
յին Յերկիր*), Ասիայի ամենահյու-
սիսային ծայրում գտնվող կղզիների
մի խումբ, ուր մինչ այդ վոչ վոք
չեր յեղել: Այնուաղ հիմնվեց գիտա-
կան կայան, և ընկ. Ռշակովը միտյն
յերեք ընկերների հետ յերկու տարվա
տնօրինակ հերոսական աշխատանքով
ավարտեց վաղջ Հյուսիսային Յերկիրի
քարտեզանկարումը, անցնելով (վոտ-
քով և շներով) ավելի քան 5000 կլմ. և
հայաստերելով թանկարժեք հանա-
ծոներ: Այդ աշխատանքով լուսարան-
ուց Հյուսիսային ծովային ճանա-
պարհի կենարոնական մասը, վորը

*) Զելյուսիին հիմնդանից գեղի հյու-
սիս ընկած կղզիների խումբը, վոր հայ-
տարերել է 1914—15 թ.թ. Ռուսական
Հիդրոգրաֆիական Արշավախումբը վիճից-
կու գլխավորությամբ: Ա. Վ.

մինչ այդ անդիք եր առյիս լողացա-
թիվ աւարակույսների:

Արկտիկայի յուրացման համար բա-
յառիկ նշանակություն ունի Հյուսի-
սային ավիացիան։ Արդեն «Կարայի
արշավախմբեր»—ին մատուցելիք ծա-
ռայություններն ողաճուների առաջ
շատ լուրջ ինդիք են զրել։ Հարկա-
վոր և նավերի ճանապարհ ընկնելուց
առաջ ողից հետազոտել Կարայի ծո-
վի սառույցների դրությունը, ցույց
տալու համար, թե նեղուցներից վո-
րովվ*) մտնել Կարայի ծովը և ի՞նչ ճա-
նապարհով առաջ շարժվել։ Այդ աշ-
խատանքներով առաջ քաշվեցին մեր

*) Կարայի ծովը կարելի յե մաննել Յ նե-
ղուցներից մեկով—Յուղորյան շարով, Կա-
րայի գոներով (Վալգաչ կղզու և Նոր Յեր-
կըրի հարավային կղզու միջն ընկած նեղու-
ցը) և Մատոչկինի շարով—կամ Նոր Յեր-
կըրի հյուսիսային կղզին հյուսիսից շրջելով
(«Յանկության» հրվանդանի մոտով):

Ա. Վ.

Հյուսիսային ողաջուները — Զուխնով-
սկին, Բարուշկինը, Ալեքսեյեվը և
այլք : Հենց այդտեղ ել աճեցին մեր ո-
դաչուների նոր կադրերը, վորոնց
փայլուն ներկայացուցիչն և հանդի-
սանում Մոլոկովը : Կարգավորվում է
ողային հաղորդակցությունը վողջ
Յենիսեյի յերկարությամբ՝ մինչև
նրա գետարերանը և Լենայի յերկա-
րությամբ (Կալվից, Սլեպնյով և
այլք) : Միաժամանակ սկսվում ե
ոդաչուական աշխատանքը նաև Արկ-
տիկայի արևելյան անկյունում՝ Զու-
հոտյան թերակղզու յերկարությամբ
(Կալվից, Կրասինսկիյ, Գալիչեվ,
Լեյխանեվսկիյ և այլք) :

Բեվեռային կայանների, ամեն տա-
րի կատարվող արշավների ու ավիո-
հետախուզությունների աշխատանք-
ների արդյունքներով կուտակված
նյութերը Խորհրդային կառավարու-
թյանը հնարավարություն տվեցին

1932 թվին խնդիր դնելու՝ վողջ Հյուսիսային ծովային ճանապարհով ճանապարհորդություն կատարելու մասին։ Խորհրդային խիզախ, հասունացած ու փորձառու բելեռային աշխատողների—դիտնականների, ծովագնացների ու ողաջուների—կադրերը միայն մեր սոցիալիզմ կառուցող յերկրի մարդկանցը հատուկ ենտուզիազմով ընդունեցին կուսակցության և կառավարության առաջադրանքը՝ Արկտիկայի վրա վճռական հարձակուղական սկսելու մասին։ Յեվ նրանց առաջին ճակատամարտը Հյուսիսային ծովային ճանապարհի դեմ պսակվեց փայլուն հաջողությամբ։ Արկտիկայի արի հերոս Ռ. Յու. Շմիդտի ռվասավորած արշավախումբը, հնացած ու մաշված «Սիբիրյակով» սառցահատով, վո'չ միայն պատմության մեջ առաջին անգամ մի նավիդացիայի ընթացքում անցավ վողջ Հյուսի-

ռույին ծովային ճամապարհով, այլև
կատարեց մի շաբք Հույժ կարեռը
անտեսական աշխատանքներ :Այդ ար-
շավոր մարդկության դարբավոր ջան-
քերի հաղթական պատկը հանդիսա-
ցավ : Այն, ինչի մասին միայն յերա-
զել կարող եր կապիտալիստական հա-
ստրակակարգը, իրականություն դա-
ռավ կոմունիզմի արշալույսին :

Բնկ . Սաալինի անձնական առաջար-
կով ԽՍՀՄ ԺԿԽ-ին կից կաղմակերպ-
ություն Հյուսիսային Ծովային Ճանա-
պարհի Դյլսավոր Վարչություն,
վորակեսղի պետական այդ հասուկ որ-
դանը բոլոր ուժերը կենտրոնացնի
խորհրդային հյուսիսի վողջ յերկա-
րաւթյամբ հուսալի ճանապարհ ունե-
նալու խնդրի իրականացման վրա :

Բնկ . Շմիդտին, լավագույն բեկե-
ռային աշխատողներ Գ. Ա. Ռւշակո-
վի, պրոֆ. Ռ. Լ. Սամոյլովիչի,
պրոֆ. Վ. Յու. Վիզեյի և այլոց հետ

մեկտեղ, առաջարկվեց զլիսավորել
այդ հիմնարկը։ Հյուսիսի յուրացումն
արգեն այնքան եր առաջ դնացել, վոր
միայն 1933 թվին, Արկտիկական
ինստիտուտի ընդհանուր դեկանավարու-
թյան ներքո, 13 խոշոր արշավախմբեր
ուղարկվեցին։ Այդ արշավախմբերի
թվումն եր նաև «Զելյուսկին» չողենա-
վի վրա դանվող արշավախումբը, վո-
րին առաջադրանք էր արշած՝ կրկնել
«Սիրիոյակով»-ի արշավը։ Այդ ար-
շավախմբի գլուխը կանոնաց Ռ. Յու.
Շմիդտը։

Մյուս արշավախմբերից հատկապես
կարեոր ե Բ. Վ. Լավրովի զլիսավոր-
ությամբ առաջին անգամ Լենայի
դետարերանը ծովալին նավեր ու-
ղարկելը։ «Կրասին» սառցահատի ա-
ռաջնորդությամբ 3 ապրանքատար
նավեր հասան Լենայի դետարերանը,
հասցըին այնտեղ բեռներ, և դրանով
բոլորովին նոր հեռանկարներ բաց ա-

րին վլող Յակուտիայի տնտեսության
 համար։ Ողային հետախուզուղումների
 ու ռադիոկայանների ցանցի առկայու-
 թյունը թույլ տվեց իրականացնել
 նույնիսկ այնպիսի մի գործարք,
 ինչողին և ծովային սառուցների
 միջով մեկ զետույին շողեշարժ նավի
 ու մի մեծ յերկաթյա բարժայի*)
 տեղափոխումը Շենիսեյից Լենա,
 վորպեսզի հնարավոր լիներ շոգենա-
 վերի բերած բեռները Լենայի հո-
 սանքով վերեւ տանելը, վորի համար
 Լենայի վրա բավականաչափ արան-
 աղորտացյին միջոցներ չկային։

IV

„ԶԵԼՅՈՒՍԿԻՆ“-ի ՀԵՐՈՍԱԿԱՆ ԱՐԴԱՎԱՆՔԸ
 1933 թվի կենտրոնական արշավա-
 յառումը «Զելյուսկին»-ինն եր։ Հու-
 յուսի 12-ին Լենինգրադից ճանապարհ-

*) Բեռնաթափման ու բեռնափոխման
 համար ծառայող առանց շարժիչի նավ։
 Ա. Վ.



«Զելյուսկին -ի » Առավապետ ըմի. Վ.ՄԻՒՆԻԴ,

վելով, «ԶԵԼՅՈՒՍԿԻՒՆ»-ը լրացրեց իր
բնոները Մուրմանսկում և այնտեղից
դուրս յեկայ ողոստոսի 10-ին։ Միայն
սեպտեմբերի 1-ին «ԶԵԼՅՈՒՍԿԻՒՆ»-ն
ու մյուս շողենավերը կարողացան
անցնել ԶԵԼՅՈՒՍԿԻՒՆ հրիտանգանի մո-
տով։ 1933 թվի սեպտեմբերի 1-ին
ԶԵԼՅՈՒՍԿԻՒՆ հրիտանգանի-Ասիայի ա-
մենահյուսիսային ծայրի-մոտ հո-
գաքիլեցին զանազան արշավախմբերի
մասնակցող տասնմեկ խորհրդային
նավեր։ Պատմության մեջ, նախքան
«Սիրիրյակով»-ի արշավը, այդ հրի-
տանգանն անցել է ին միայն 9 նա-
վեր։ Խորհրդային նավեցի այդ դորա-
հանգեսր վոչ հեռու անցյալում հո-
մարյա տնհասանելի համարվող այդ-
կետի մոտ, խորհրդային բենուային
աշխատողների հաղթական հանդեսն
եր և Արկտիկայում կատարվող խոր-
հրդային աշխատանքի ու Արկտիկա-
յի վրա կատարվող հարձակողականի

րուշեիկյան ուժի մասշտաբների ցուցանիշը:

Առանց առանձին արդելքների հանդիպելու, «Զելյուսկին»-ը անցավ մինչև Բերինդյան նեղուցից 300 կլմ-ի վրա գտնվող Կալյուչինի խորշը: Այստեղ դժվարանցանելի սառուցները նրան կաշկանդեցին: Սակայն այդ սառուցներից հաջողվեց ազատվել, և նոյեմբերի սկզբին «Զելյուսկին»-ը արդեն Բերինդյան նեղուցումն էր: Այդպիսով II անդամ խորհրդացին արշավախումբը անցավ վողջ Հյուսիսային ծովային ճանապարհը՝ մեկ նավիդացիայի ընթացքում: Խաղաղովկիանոս դուրս դարձած չհաջողվեց, քանի վոր ժամանակն արդեն ուշ էր. Բերինդյան նեղուցը լցված էր անանցանելի սառուցներով: Խաղաղովկիանոս մտնելու ճանապարհը փակ էր: Հարավային ուժեղ վոթորիկը «Զելյուսկին»-ին շպրտեց հյուսիս. «Զելյուսկին»-ը ճմեռեց լո-

դացնել սպառույցների մեջ։ 1934 թվի
փետրվարի 13-ին սպառույցների ու-
ժեղ ձեռշումբ խորտակեց նավը . . . :

Սառցի վրա գտնվող 104 մարդու
կյանքի և ազատվելու պատմությունը
շատ լավ հայտնի յէ ԽՍՀՄ-ն և վողջ
աշխարհի բոլոր աշխատավորներին,
վորոնք հսկայական հետաքրքրու-
թյամբ ու վողեվորությամբ հետևում
ելին։ այդ եպոպեային։ Հիմա «Զել-
յուսկինցի» բառը հայտնի յէ դասել
ամբողջ աշխարհին։ Զելյուսկինցինե-
րը հերոսության, բոլչեիկյան հաս-
տատակամության, կազմակերպվա-
ծության և Խորհրդային Միության
հզորության մասին ունեցած հավա-
տի որինակ գառան։ Բեկուային լոգո-
ցող սպառույցների վրա, առանց նավի
մնալով, անընդհատ վտանգի սպառ-
նալիքի տակ, նրանք չհուսահատվե-
ցին, չկորցրին իրենց եներգիան, և
չթուլացրին իրենց գիտական աշխա-
տանքները, վոր կատարում ելին։ Սա-

ռուցյալ ծովքը դուրս զալու որից : Զել-
յուսկինցիները քաջ գիտելին Խորհը-
ղային Միության Հղորությունը : Յեզ-
նրանք չսխալվեցին :

«Զելյուսկին»-ի խորառակման հենց
մյուս որը Խորհըգային կառավարու-
թյունը ձեռք է առնում բոլոր միջոց-
ները՝ Հյուսիսային ծովային ճանա-
պարհի յուրացման համար պայքարող
Հերոսական մարտիկների փրկության
համար : Զելյուսկինցիներին ովնու-
թյուն ցույց տվող կառավարուկան
հանձնաժողովը, բնկ. Դ. Վ. Կույրե-
շեի գլխավորությում, մորիլիզա-
ցիայի յե յենթարկում բոլոր միջոց-
ները՝ ովնություն ցույց տալու հա-
մար : Համաշխարհային պրոլետարի-
տակի առաջնորդ բնկ . Ստալինը ան-
ձամբ ուղղություն է ցույց տալիս և
ոտուգում յուրաքանչյուր միջոցա-
ռում : Հերոս-չելյուսկինցիներին բո-
շավառ բոլշևիկյան վողջույն հղելով,

մեր յերկըի ու պանծալի կուսակցության առաջնորդները — ընկերներ Ստալինը, Մոլոտովը, Կագանովիչը, Վորոշիլովը, Կույբիշևիը, Որջոնիկիձեն — գրում եյին .—

«Հիացմունքով հետևում ենք տարերւոքի դեմ մղած ձեր հերոսական պայքարին և ձեռնարկում ենք բոլոր միւշջոցները՝ ձեզ ոգնություն ցույց տալու համար։ Հավատացած ենք ձեր պանծալի արշավանքի հաջողությամբ ովերջանալուն և նըանում, վոր դուք Շնոր, պանծալի եղեր կդրեք Արկտիկայի համար մղված պայքարի պատմության մեջ»։

Կուսակցության և կառավարության շուրջը համախմբված վաղջ յերկիրը վողեվորությամբ ցուցաբերում ե իր ուժն ու միասնությանը։ Լավագույն ողաչուները, ծովագնացներն ու բնեուային աշխատողները իրենց դնում են չելյուսկինցիներին ոգնություն ցույց

տվող կառավարական հանձնաժողովի տրամադրության տակ: Զելյուսկինցիների ազատման զործի մեջ մասնակցելու պատվին ուրժանացածները իրենց չափազա՞նց բաղդավոր են համարում . . . :

Անընդհատ աճող անդապելի հեղեղատի նման, դեպի բևեռային սառուցների մեջ շարժվող կետը — Շմիդտի ճամբարն են ուղարկվում ողանավերի ջոկատներ, նավեր, դիրիժարլներ, այերոսահնակներ և այլն:

Զելյուսկինցիների ազատումը — դա խսկապես խորհրդային ավիացիայի, խորհրդային տեխնիկայի վայլուն հաղթական հանդեսն եր: Խորհրդային ողաչուները, ամբողջապես խորհրդային նյութերից շինված անխափան աշխատող խորհրդային մատորներով զինված խորհրդային ողանավերով արեցին այն, ինչ մեր թշնամիների համար անկարելի յեր թվում: «Զկան

այնպիսի ամրոցներ, վոր բոլշևիկները չկարողանային դրավել»:

Վագիստառկից շողմնավով դուքս և գալիս Կամանինի ողանավախումբը: Ասուույցների սահմանին հասնելով, խումբը սկսում է իր թռիչքը: Խաբարովսկից, սառնամանիքների ու ձյան փոթորիկների պայմաններում սկըսվում է Վագտաղյանովի խմբի անորինակ արի, պատմության մեջ իր նմանը չունեցող, թռիչքը: Շրջանային ճանապարհով, Յելրոպայի, Ատլանդյան ովկիանոսի և Ամերիկայի վրայով գեղի Շմիդտի ճամբարն են ըշտապում Լեվանեվսկիին ու Սլեպնյովը, Կառավարական Հանձնաժողովի լիդոր ընկ. Գ. Ա. Ռշակովի գլխավորությամբ: Մոսկվայից, ամբողջ Մեռթյան վրայով, շտապում ե եքսպրեսսոր՝ դիրիժարներով: Լենինգրադից, յերբեք սառույց չտեսած անծանոթ ծովերով, չելյուսկինցիներին սզ-

նելու յե շտապում խորհրդային սառցահատների ավաղը, մեր փառապանծ «Կրասին»—ը . . . :

Վոչ մի բան չեր կարող կասեցնել այդ հեղեղատը. վո՛չ ձյան բքերը, վո՛չ սառույցները, վո՛չ հսկայական փոթորիկները ծովում, վո՛չ մառախուղները։ Յեւ Արկաֆիկան հաղթվեց։ Նա իր սառցե ծոցից լաց թողեց այն մարդկանց, վորոնց պատրաստ եր մտցնել իր զոհերի թվի մեջ։ Հերոսն չելյուսկինցիները աղատվեցին Խորհրդային Միության հերոս-ողաչուների միջոցով։ Այդպես վերջացավ «Զելյուսկին»-ի հերոսական արշավանքը։

Վողջ աշխատավոր մարդկությունը ու վողջ կուլտուրական աշխարհը շունչը պահած հետևում եյին Արկաֆիկայում կատարվող անցքերին, հըրճվելով և' ազատվածների, և' ազատողների անվեհերությամբ։ Խորհրդային

Միության ողաչուների հերոսության
մասին ողազնացության դործի ամե-
նալավագաղետներն աշխարհում
տառամ են, վոր«Ձելյուսկին»—ի անվան
հետ կապված հիացմունքի արժանի
այդ դործը մեկն և այն մեծագույն
արարքներից վորը յերբեքց կատա-
րել և ժամանակակից համաշխարհա-
յին ամբիացիան։ Նրանով պարծենում
են վո'չ միայն Խորհրդային Միու-
թյան, այլ նաև ամբողջ աշխարհի ո-
ղազնացները»։ Յեկ միայն նրանք,
վոր գաղանային կատաղությամբ այ-
րում եյին մարդկության ամենալավ
ներկայացուցիչների դրքերը, չարա-
խրնդում եյին ու կռկուռմ արշավա-
խրմբի անհաջողության ու խորհրդա-
յին մարդկանց կործանման մասին։

Խորհրդային Միության ժողովուրդ-
ները գարճյալ ուրախության մեջ,
ցուցաբերում են իրենց միասնությու-
նը կուսակցության և կառավարու-

թյան շուրջը, սոցիալիոտական հայ-
րենիքի արժանի զավակներին— Հե-
րոս-ողաչուներին ու չելյուսկինցի-
ներին բերող եքսպրեսսի շարժումը
Հաղթական հանդիսի դնացք դարձ-
նելով։ Խորհրդային Միությունը կա-
րող ե պարծենալ այդպիսի քաղաքա-
ցիներով։

Նշելով չելյուսկինցիների ազատու-
մը իրականացնող ողաչուների Հերո-
սական աշխատանքը, կռւսակցությու-
նը և կառավարությունը վորոշեցին
«Խորհրդային Միության Հերոսի» կո-
չում տալ Լյապիդեվսկուն, Լեվա-
նեվսկուն, Մոլոկովին, Կամանինին,
Սիեմինյամին, Վաղապյանովին և Դա-
րոնինին։ Կառավարությունը սկարդե-
վատրեց Միության շքանշաններով ու
այլ պարզեներով բոլոր չելյուսկին-
ցիներին և նրանց վորոնք անմիջա-
կանորեն մասնակցել ելին չելյուսկին-
ցիների ազատման գործին։



Խարիբդային Միուրյամ հերոսներ, «Զելյառկիմյաններին»
փրկող ողջանավորդներ՝ ըմկ ըմկ. ԱԼԵՊՆՈՎ, ԼՅՈՒ-
ԴԵՎՍԿԻ, ԼԵՎԱՆԵՎՍԿԻ, ՎՐԴԻԳՅԱՆՈՎ, ԿԱՄԱՆԻՆ,
ՄՈԼՈԿՈՎ, ԴԱՐՈՆԻՆ

Մեր վողջ լայնածավալ յերկիրը
գիտե Խորհրդային Միության հերոս
ողաչուների անունները, մեր արի
բորտմեխանիկների*) անունները. մեր
վողջ լայնածավալ յերկիրը դիտե և
սիրում ե Արկտիկայի խիղախ հերոս-
ների—ընկերներ Շմիդտի, Ռւշակո-
վի, Բարբովի, Վարոնինի, Կրենկելի,
Բայելսկու, Կապուսովի, Բարուշկի-
նի և այլոց անունները:

Միմիայն կայուն բոլշևիկների կողմից զեկավարվող ամբողջ աշխարհից կտրված ու սառույցներով շրջապատված խորհրդային կոլեկտիվը ի վիճակի յեղավ ցույց տալ այդպիսի կայունություն և համախմբվածություն:

Միմիայն Լենինի-Մտավինի մեծ կուսակցության, մեր հզոր սոցիալիստական հայրենիքի սնած ու կըթած

*) Ողանավի անձնակազմի անդամներից մեկի կոչումը:

Ա. Վ.

մարդիկ կ կարող ենք ին ամենալժվարին
սկս յմաններում ցուցաբերել այլպիսի
հերթականություն, արիություն և բոլշևի-
կյան կազմակերպվածություն։ Մի-
ահայն բոլոր աշխատավորներին մո-
տիկ ու հարազատ Խորհրդային իշ-
խանությունը, վորք աղքատ, հետա-
մնաց ու անկառագործեան Ծուօսս-
տանը առաջավար ինչուսարիայի և
աշխարհի ամենախոշոր գյուղատնտե-
սության յերկիր գործքեց, կարող եք
չելքուսկինցինների տղաման աշխա-
տանքները կազմակերպել այլպիսի
հոյակապ թափակ, համառությամբ
ու հետեւողականությունը։

ՑԱՆԿ

I. Ինչու յե Խորհրդային իշխանությունը պայքարում Արկտիկայի յուրացման	
համար	3
II Ինչպես և հայտաբերվել Հյուսիսային ծովային ճանապարհը	15
III Խորհրդային Արկտիկական արշավախըմ- բերը	26
IV «Զեյռուսկին-ի» հերոսական արշա . . վանքը	37



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045317

(134.)
ԳԻՒԸ 40 Կ.Մ.

A-I
8448



БОРЬБА ЗА СОВЕТСКУЮ
АРКТИКУ

Гиз ССР Армении